# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 29-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի երկրորդ մասի 1, 2, 3 կետերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից տրված միասնական տեղեկանքը, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 8-րդ փողոց 1 հասցեում գտնվող Լևոն Աբրահամի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր՝ 04-009-0020-0011) գրանցված 0,288 հեկտար տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 52 քառակուսի մետր հողամասը, ընդամենը 0,2932 հեկտար, սեփականության իրավունքով տրամադրել Լևոն Աբրահամի Մովսիսյանին:
2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Վաղարշապատի սպասարկման գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2019 թ. օգոստոսի 06
գ.Այգեկ